# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԵՍԵՍԹԻ-ն ՀՀՏՄ-ԵԱՃԱՊՁԲ-2024/04 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | գրապահարաններ | գրապահարաններ | գրապահարաններ | ՀՀ | "Գրապահարանն ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված է լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ ( L x Խ x Բ): Գրապահարանը պատրաստված է էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, ողորկ է, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները՝ հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովող հատուկ դետալներով: Ամուր են՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Ապահովված է էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Ապահովված է էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը հարմարավետ է ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Գրապահարանը ունի 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ФSU-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները ունեն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մետաղական օվալաձև բռնակներ: Դարակները պատրաստված են լամինացված 18 մմ հաստության E0դասի ՓՏU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակված են 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Աշխատանքային հարթությունը անփայլ է, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն իրականացված են թաքնված ամրակցումներով: Գրապահարանի հետնապատը ունի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն E0դասի ՓՏU գույնի: Պահարանն ամբողջ պարագծով ունի շրջանակաձև ոտքեր: Ոտքերը կարգավորվող են: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 300 x 100 մմ (Lx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տակից ամրացված են պլաստիկե մուգ գույնի տակդիրներով, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Նմուշների մինչ մատակարարումը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Սահմանվում է երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես` անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ` տեխնիկական անձնագրում):" |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԷՍԷՍԹԻ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |
| | | | | | |